ԱՆՀՐԱԺԵՇՏ, ՈՒՍԱՆԵԼԻ, ՕԳՏԱԿԱՐ ՈՒ ՀԵՏԱՔՐՔԻՐ

Արտակարգ թերթ

à í Çñ³½»Ï í³Í ¿, Ý³ å³ßïå³Ýí³Í ¿

URL:http://www.emergency.am, E-mail: tert@emergency.am

N 8 (233)

7.3.08-13.3.08

Շաբաթաթերթ

Քրոնիկոն էջ 2, 3

Միջազգային էջ 2

Փրկարաներին օգնում են պայծառատեսները էջ 5

Առաջին օգնություն էջ 6

«Կոսպատրիկ» առագաստանավի ճակատագիրը էջ 7

Արտակարգ ժամանց էջ 8

Գինը 100 դրամ

Արտակարգ շնորհավորանք

Բնական ու տեխնածին աղետների այս երկրում, որտեղ ամեն քար ու թփի տակ, ամեն սար ու ձորի ծերպերին վտանգ է թաքնված, չկա ավելի հզոր պաշտպանական համակարգ, քան հայ կինը, մայրը, քույրը: Ասենք՝ բոլոր ազգերին էլ պահողը կինն է, բայց մերն՝ առավել: Եվ որքան էլ միջազգային լինի այս գիժ ամսվա ութերորդ, թվում է, թե սովորական գարնանային օրը, միեւնույն է, սա մեր օրն է, մեկն այն 366-ից, որում հայ կինը հերթական անգամ պետք է մեծարվի, գուցե ամենօրյա մեծարանքից քիչ ավելի: Ու բնավ էլ կապ չունի, թե դրսում ինչ եղանակ է՝ գարուն, թե աշուն... Հայ կնոջ կողքին միշտ էլ գարուն է, ծաղկաշատ ու երանավետ, ապահով ու անվտանգ գարուն:

Մեր սիրելի ու քաղցր կանանց կենացը

Մեր թանկագին սիրասուն մայրեր, փափկասուն կանայք, նազելի աղջիկներ, «Արտակարգ թերթը» շնորհավորում է ձեր գարնանային տոնը, ցանկանում ձեզ արտակարգ առողջություն, անխաթար երջանկություն, անսահման սեր ու լիակատար ինքնահաստատում:

Մարտի 8-ին կանանց գեղեցիկ նվերներ ու ծաղիկներ են նվիրում, հաճելի խոսքեր ասում, բայց միեւնույն է՝ նրանց չեն հասկանում: Հայտնի է, որ հորիզոնական դիրքով շրջված 8 թիվն անվերջության նշանն է:

Եկե՛ք, այսօր խմենք տղամարդկանց ու կանանց միջեւ անվերջ փոխըմբռնման կենացը՝ այն անդունդի, որը նրանց այդքան լավ... միավորում է:

***

Անգլիացի գրող Զոն Ռեսքինն ասել է. «Ոչ ոք չի կարող իրական կյանք ապրել, եթե չի մաքրագործվել կնոջ սիրով, ամրացել նրա արիությամբ ու ղեկավարվել նրա համեստ դատողություններով»:

Ուրեմն, եկե՛ք խմենք կանանց, եւ տղամարդկանց հանդեպ նրանց ունեցած սիրո կենացը:

***

Կինը բոլոր կողմերից է կին:

Եկե՛ք խմենք համակողմանի զարգացած կանանց կենացը:

ß³ñáõÝ³ ÏáõÃÛáõÝÁ 4-ñ¹ ¿çáõÙ

«Էլիտ գրուպն» առաջարկում է կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլեւս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպը» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

.. ՔՐՈՆԻԿՈՆ ..

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Ավտոդստահարներ

Փետրվարի 29-ին տեղեկություն է ստացվել, թե ժամը 05.20-ի սահմաններում Սեւան-Երեւան ավտոճանապարհի 25-րդ կմ-ին, դեռեւս չպարզված հանգամանքներում, «ԶԻL-130» մակնիշի 04 ՍՕ 086 պետհամարանիշով ինքնաթափ ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի մասից եւ շրջվել ձորը, որի հետեւանքով վարորդը տեղում մահացել է: Սակայն դեպքի վայր մեկնած փրկարարները պարզել են, որ ավտոմեքենայի վարորդ Վանիկ Վարդանյանը ողջ է եւ ստացել է թեթեւ մարմնական վնասվածքներ, իսկ ուղեւոր, 1980 թ. ծնված Հայկ Վարդանյանը մահացել է, որի դիակը բեռնատարի խցիկից դուրս են բերել եւ հանձնել իրավապահ մարմիններին:

***

Փետրվարի 29-ին Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 165-րդ կմ-ին, դեռեւս չպարզված հանգամանքներում, Իրանի Իսլամական Հանրապետության մի քաղաքացու վարած կցորդիչով բեռնատարից պոկվել եւ շրջվել է 25 տոննա տարողությամբ բաքը, ինչի հետեւանքով տեղի է ունեցել անհայտ տեսակի հեղուկ նյութի արտահոսք, որը լցվելով մոտակա առուն՝ առաջացրել է ձկների անկում:

Նյութն ուղարկվել է փորձաքննության:

Զոհեր եւ վիրավորներ չկան:

***

Այդ օրը Երեւան-Սեւան ավտոճանապարհի 45-րդ կմ-ին «ԲՄՎ» մակնիշի 13 ՍՕ 508 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս գալով ճանապարհի երթեւեկելի մասից ընկել է ձորը:

Պատահարի հետեւանքով ավտոմեքենայի վարորդ՝ 1970 թ. ծնված Անդրանիկ Գրիշյանը եւ ուղեւոր՝ 1972 թ. ծնված Սոնյա Գիլոյանը ստացել են տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներ:

Փրկարարների օգնությամբ տուժածները դուրս են բերվել ավտոմեքենայից եւ տեղափոխվել Հրազդանի հիվանդանոց, այնուհետեւ՝ Երեւանի «Էրեբունի» բժշկական կենտրոն:

***

Մարտի 1-ին Արթիկ-Պեմզաշեն ավտոճանապարհին իրար են բախվել «Մերսեդես G500» մակնիշի 04 SL 004 պետհամարանիշով եւ «Վարուժ Ռում» ՍՊԸ-ին պատկանող «Ֆորդ» մակնիշի 2117 L պետհամարանիշով ավտոմեքենաները:

Ավտովթարի հետեւանքով «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի ուղեւոր՝ 1986 թ. ծնված Արփինե Գալստյանը տեղում մահացել է:

Պատահարի վայր մեկնած հրշեջ-փրկարարները «Մերսեդես G500» մեքենայից դուրս են բերել 1958 թ. ծնված Ա. Գեւորգյանին եւ 1962 թ. ծնված Պ. Զաքարյանին, որոնք տեղափոխվել են Մարալիկի հիվանդանոց, իսկ մյուս ավտոմեքենայից դուրս բերված 1951 թ. ծնված Մարիետա Արսոյանը, 1982 թ. ծնված Արսեն Վարդանյանը, 1984 թ. ծնված Լեւոն Վասրադյանը, 1976 թ. ծնված Գայանե Պապիկյանը եւ 1983 թ. ծնված Արման Վարդանյանը տեղափոխվել են Արթիկի հիվանդանոց:

Ավելի ուշ տեղեկություն է ստացվել, որ Գ. Պապիկյանը եւ Ա. Վարդանյանը հիվանդանոցում մահացել են:

«Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը տեղափոխվել է Գյումրիի Գյուլբենկյանի անվան հիվանդանոց, իսկ մյուս վարորդը հոսպիտալացումից հրաժարվել է:

Պայթյուն

Մարտի 5-ին Գեղարքունիքի մարզից տեղեկացվել է, որ ժամը 12.20-ին Մարտունու Կամոյի փողոցում գտնվող «ԱԳԼԾԿ» գազալցակայանի տարածքում «ԳԱԶ-31029» մակնիշի 13 LL 692 պետհամարանիշով ավտոմեքենայի գազի բալոնների լիցքավորման ժամանակ տեղի է ունեցել պայթյուն:

Պայթյունի հետեւանքով գազալցակայանի աշխատակից, 1986 թ. ծնված Ա. Հակոբյանը տեղում մահացել է, իսկ «ԳԱԶ-24» մակնիշի 16 LS 976 պետհամարանիշով ավտոմեքենայի վարորդ՝ 1970 թ. ծնված Ա. Մարգարյանը մարմնական տարբեր աստիճանների վնասվածքներով տեղափոխվել է քաղաքային հիվանդանոց:

Փլուզում

Մարտի 4-ին, ժամը 10.33-ին ահազանգ է ստացվել, որ գիշերը փլուզվել է Երեւանի Քանաքեռի 2-րդ փողոցի 28 տան արտաքին պատը: Դեպքի վայր են մեկնել փրկարար ծառայության Քանաքեռ-Զեյթուն համայնքային բաժնի պետն ու համայնքի թաղապետարանի քաղաքաշինության եւ ճարտարապետության բաժնի պետը:

Պարզվել է, որ փլուզվել է տան ճակատային մասի քարե պատի մոտ 20 քմ մակերեսով հատվածը, իսկ 10-12 քմ մակերեսով հատվածում փլուզման վտանգ չկա: Վնասվել է հարակից անցնող գազի խողովակաշարի 2 հենասյուն: Տուն մտնող գազամատակարարումը դադարեցված է:

Տուժածներ չկան:

Թունավորվել են բնական գազից

Մարտի 5-ին Վանաձորի 1-03 ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ բնական գազից թունավորման նախանշաններով քաղաքի թիվ 1 հիվանդանոցային համալիր են տեղափոխվել Խնձորուտ թաղամասի 2-րդ փողոցի 2-րդ փակուղու 4 տան բնակիչներ՝ 1937 թ. ծնված Զարիկ Չատինյանը, 1963 թ. ծնված Ավետիք, 1962 թ. ծնված Յուրա եւ 1964 թ. ծնված Անժելա Սարգսյանները:

Տուժածները, ստանալով առաջին բուժօգնություն, դուրս են գրվել հիվանդանոցից:

Հրդեհներ

Անցած շաբաթ հանրապետությունում գրանցվել է հրդեհների բռնկման 29 դեպք:

Հրդեհ եւ պայթյուն

Մարտի 1-ին, ժամը 14.48-ին ահազանգ է

➔

International NEWS .. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ ..

Թռչնագրիպի նոր դեպք Եվրոպայում

Ուրբաթ օրը հայտնի է դարձել, որ թռչնի գրիպի նոր օջախ է գրանցվել Մեծ Բրիտանիայում: Ինչպես հայտնում են տեղական լրատվամիջոցները, երկրի Դորսեթ շրջանում հայտնաբերվել է սատկած թռչուն: Լաբորատոր հետազոտություններից հետո պարզվել է, որ թռչունը սատկել է H5N1 վիրուսից: Հիշեցնենք, որ տարվա սկզբից թռչնի գրիպի վիրուսից Դորսեթում սատկել է մի քանի կարապ:

Մեծ Բրիտանիայի շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչը հայտարարել է, որ ընտանի թռչունների վարակման դեպքեր չեն արձանագրվել: Իրականացվում են կանխարգելիչ միջոցառումներ:

Ջուր եւ կրակ

Ջրհեղեղները կաթվածահար են արել Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսի բնականոն կյանքը: Տեղի հեռուստաալիքներն անընդհատ ցուցադրում են հեղեղված թաղամասերի կադրեր: Տուժած շրջաններում խափանվել է տրանսպորտի երթեւեկությունը, բնակելի տների ու գրասենյակային շենքերի առաջին հարկերն անցել են ջրի տակ:

Միեւնույն ժամանակ երկրի հարավային շրջաններում անձրեւների խիստ պակաս է զգացվում. անտառային հրդեհները նորանոր տարածքներ են նվաճում: Իրականացվում է բնակչության տարահանում: Ոչնչացման սպառնալիքի տակ է հայտնվել Լոս Ալերսես հայտնի արգելանոցը: Լոս Ալերսեսն աշխարհի այն հազվագյուտ վայրերից է, որտեղ դեռ պահպանվել են հազարամյա ծառեր:

Ջուրն արտակարգ իրավիճակ է ստեղծել Նամիբիայում: Երկրի հյուսիսում ջրհեղեղների զոհ է դարձել 42 մարդ: Նման տեղատարափ անձրեւներ Նամիբիայի բնակիչները չեն տեսել շուրջ 35 տարի: Տարահանվել են հազարավոր մարդիկ, փակվել են դպրոցներ եւ այլ հաստատություններ: Օդերեւութաբանական ծառայության տվյալներով՝ անձրեւները դեռ շարունակվելու են:

Իսպանիան ձնածածկվել է

Գրեթե երեք շաբաթվա արեւային եղանակից հետո ձյան առատ տեղումները, կրկնելով անցյալ տարվա մարտին ստեղծված իրավիճակը, թափվել են Իսպանիայի վրա: Անբարենպաստ եղանակը ուղեկցվել է ուժգին քամիներով եւ տարվա այս եղանակի համար չափազանց ցածր ջերմաստիճանով: Երկրի մի շարք շրջաններում խափանվել է ճանապարհային եւ երկաթուղային երթեւեկությունը:

Մայրաքաղաք Մադրիդում փրկարար ծառայությունները չեն հասցնում արձագանքել ահազանգերի հեղեղին: Քաղաքի փողոցներում թափված են պոկված գովազդային վահանակներ, արմատախիլ արված ծառեր, փլատակների կույտեր: Փոթորկի պատճառով ժամանակավորապես դադարեցվել է նավահանգիստների աշխատանքը:

Եվրոպայի տարածքով փոթորիկ է անցել

Շաբաթ օրը կենտրոնական Եվրոպայի տարածքով անցած ուժգին փոթորկի զոհ է դարձել առնվազն ութ մարդ: Գերմանիայում փոթորկային քամին պոկել է Դյուսելդորֆ քաղաքի օդանավակայանի շենքի տանիքը: Ֆրանկֆուրտում հետաձգվել է մոտ 70 չվերթ:

Խափանվել է նաեւ Ավստրիայի եւ Չեխիայի երկաթուղային ու օդային հաղորդակցությունը: Լեռներում հայտարարվել է ձնահյուսերի վտանգ:

Դեղին տենդը թափառում է Բրազիլիայում

Բրազիլիայի երկու նահանգներում դեղին տենդից զոհվել է 19 մարդ: Տենդի առաջին բռնկումը գրանցվել էր դեռ հունվարին: Բժիշկները շարունակում են պնդել, որ համաճարակի առաջացման վտանգ չկա:

Ավտոպատահարը տասնյակ մարդկանց կյանք է խլել

Շաբաթ օրը խոշոր ճանապարհատրանսպորտային պատահար է տեղի ունեցել Գվատեմալայում: Կուիլապա քաղաքի մերձակայքում դեռեւս չպարզված հանգամանքներում 50 մետր բարձրությունից անդունդն է գլորվել մոտ 100 ուղեւորով ավտոբուսը: Վթարի հետեւանքով զոհվել է 57

մարդ, այդ թվում՝ երեխաներ: Մոտ 40 ուղեւոր ստացել է տարբեր վնասվածքներ:

Պատահարի պատճառները ճշտվում են:

Ֆահնա Թյունիքարյան

ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Տիգրան Մեծի պողոտայում՝ «Այրարատ» տոնավաճառի հարեւանությամբ գտնվող առեւտրի տաղավարներում:

Դեպքի վայր է մեկնել 4 մարտական հաշվարկ:

Հրդեհը մարվել է ժամը 15.25-ին:

Այրվել է 8 տաղավար՝ 100 քմ ընդհանուր մակերեսով:

Տաղավարներում գտնվել են գազի բալոններ, որոնց պայթյունի հետեւանքով տաղավարի աշխատակից՝ 1980 թ. ծնված Զոհրաբ Սարգսյանը տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը կայուն է:

Այրվեցին մեքենաներ

Մարտի 1-ին, ժամը 15.30-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Գ. Լուսավորիչ փողոցում՝ Սունդուկյանի անվան թատրոնին հարակից տարածքում այրվում է ոստիկանությանը պատկանող «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենա: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Քաղաքացիները չեն թողել հրշեջ ավտոմեքենային մոտենալ հրդեհի օջախին: Ժամը 15.34-ին դեպքի վայր է մեկնել եւս մեկ մարտական հաշվարկ: Քաղաքացիները խոչընդոտել են հրդեհաշիջման աշխատանքների կատարմանը, քարերով խփել են ավտոմեքենային, ջարդել դիմապակին, որի հետեւանքով աչքի վնասվածք է ստացել հրշեջ-փրկարար Վ. Ղամբարյանը:

Հրդեհը մարվել է ժամը 15.49-ին: Ավտոմեքենան ամբողջությամբ այրվել է:

Վ. Ղամբարյանը տեղափոխվել է թիվ 8 հիվանդանոց, որտեղ ստանալով անհրաժեշտ բուժօգնություն, դուրս է գրվել հիվանդանոցից:

Մարտի 1-ին ստացվել են ավտոմեքենաների այրման վերաբերյալ այլ ահազանգեր, սակայն հրշեջ ավտոմեքենաներին չի հաջողվել մոտենալ հրդեհների օջախին:

Անասնագոմում

Մարտի 1-ին, ժամը 22.45-ին հրդեհ է բռնկվել Գեղարքունիքի մարզի Շատջրեք գյուղում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մարվել է ժամը 00.25-ին:

Այրվել են Զ. Խաչատրյանին պատկանող անասնագոմի տանիքը, պահեստավորած խոտ եւ աթար, ծխից խեղդվել է 20 հավ:

Արտադրամասը

Մարտի 2-ին, ժամը 07.00-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Հանրապետության փողոցի 62 հասցեում՝ կոշիկի մասնագիտացված խանութում: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Հրշեջներին հաջողվել է հրդեհը մարվել ժամը 08.00-ին:

Նկուղային հարկում այրվել է 100 քմ մակերեսով կոշիկի արտադրամասը:

Փայտե տնակը

Մարտի 3-ին Կոտայքի մարզից ահազանգ է ստացվել, որ Չարենցավանի մերձակայքում գտնվող կամրջին հարակից տարածքում բռնկված հրդեհի հետեւանքով ամբողջությամբ այրվել է փայտե տնակ:

Ննջասենյակը

Մարտի 4-ին, ժամը 04.32-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Զորավար Անդրանիկի 117 շենքի 55 բնակարանում:

Այրվել է ննջասենյակի գույքը՝ 12 քմ մակերեսով:

Դեպքի վայր են մեկնել երկու մարտական հաշվարկ եւ «Մագիրուս» ավտոսանդուղքը, որը, անհրաժեշտություն չլինելու պատճառով, վերադարձվել է ճանապարհից:

Հրդեհը մարվել է ժամը 05.03-ին:

Պահեստը

Մարտի 4-ին, ժամը 12.44-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Արմավիրի մարզի Զրառատ գյուղում: Դեպքի վայր է մեկնել երեք մարտական հաշվարկ:

Հրդեհը մարվել է ժամը 14.50-ին:

Այրվել են Գ. Գրիգորյանին պատկանող «Կոնստանտին եւ քույրեր» ՍՊԸ-ին պատկանող թունաքիմիկատների պահեստը՝ 300 քմ մակերեսով, 80 տոննա բենզոլաթթու եւ 200 կգ ծծումբի մնացորդ, ինչպես նաեւ պահեստին հարակից 300 քմ մակերեսով ծածկը:

Մշակույթի տանը

Մարտի 4-ին, ժամը 08.10-ին հրդեհ է բռնկվել Արարատի մարզի Արեւշատ գյուղում: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Հրդեհը մարվել է ժամը 14.25-ին:

Այրվել են մշակույթի տան դահլիճը, 200 քմ մակերեսով բեմահարթակը եւ 600 քմ մակերեսով տանիքը:

Ավտոտնակում

Մարտի 5-ին հրդեհ է բռնկվել Վանաձորի Տարոն-4 թաղամասի 3 շենքի բակում գտնվող ավտոտնակներից մեկում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մարվել է ժամը 17.25-ին:

Այրվել են ներսի երեսպատվածքը՝ 36 քմ մակերեսով, եւ ավտոտնակում գտնվող չորս հավ ու երկու նապաստակ:

ԼՂՀ ՓԾ լրատվական կենտրոն

Հրդեհներ

Մարտի 2-ին Ասկերանի շրջանի Քռասնի գյուղի մոտակայքում գտնվող «Ներջուր» հանգստյան գոտու տարածքում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է 5000 քմ. մակերեսով, իսկ Ստեփանակերտի Աջափնյակ թաղամասում՝ 1000 հակ խոտ:

Մարտի 4-ին Հադրութի Կիզակի փողոցի 9 հասցեում այրվել է բնակելի մի տուն, որտեղ հրդեհաշիջման ժամանակ հայտնաբերվել է տանտիրոջ՝ 1924 թ. ծնված Միքայել Պետրոսյանի այրված դին:

Ջենֆ-զինամթերֆ

Մարտի 5-ին Մարտունի քաղաքի բնակիչ՝ 1995 թ. ծնված Եղիշե Ավագյանը «Հկթ-7» տեսակի նռնակի լիցքային մասի հետ խաղալիս պայթեցրել է այն, որի հետեւանքով ստացել է աջ ձեռքի դաստակի վնասվածք եւ տեղափոխվել հիվանդանոց:

Ավտոպատահար

Մարտի 1-ին Ստեփանակերտ-Շուշի տանող ճանապարհին իրար են բախվել «Ժիգուլի» եւ «Ուռալ» մակնիշ մեքենաները:

Բախման հետեւանքով «Ժիգուլի» ավտոմեքենայի վարորդը՝ 1965 թ. ծնված Կարեն Զավաքյանը եւ ուղեւորը մահացել են:

Նաիրա Եղիազարյան



Փետրվարի 28-ից մինչեւ մարտի 5-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է ինը երկրաշարժ: Մարտի 1-ին Իրանում տեղի են ունեցել երեք երկրաշարժ Խոյ քաղաքից համապատասխանաբար 29 եւ 35 կմ հյուսիս-արեւմուտք եւ 39 կմ հյուսիս-արեւելք: Առաջին երկրաշարժի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 4-5 բալ, հաջորդ երկուսինը՝ 3 բալ: Հաջորդ օրը Ադրբեջանում 3 եւ 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժեր են գրանցվել Շեկի քաղաքից 28 կմ հյուսիս-արեւմուտք եւ 8 կմ հարավ-արեւելք: 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել Գյոկչայ քաղաքից 32 կմ հյուսիս-արեւելք: Մարտի 3-ին եւ 4-ին Թուրքիայի տարածքում գրանցվել են 4 բալ ուժգնությամբ երկրաշարժեր՝ Սարիղամիշ քաղաքից 17 կմ եւ Վան քաղաքից 37 կմ հյուսիս-արեւմուտք: Մարտի 3-ին Վրաստան-Ռուսաստան սահմանային գոտում 3 բալ ուժգնությամբ սեյսմիկ ցնցում է տեղի ունեցել Վրացական Քվարելի քաղաքից 29 կմ հյուսիս-արեւելք:

Տարածաշրջանից դուրս. 6 եւ ավելի մագնիտուդով գրանցվել են չորս ուժեղ երկրաշարժեր, որոնք տեղի են ունեցել մարտի 3-ին: Հնդկական օվկիանոսում, ինդոնեզական Սումատրա կղզու հարավ-արեւմտյան հատվածում, գրանցվել է 6,1 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Մյուս երեք երկրաշարժերը տեղի են ունեցել Խաղաղ օվկիանոսում: Առաջինը գրանցվել է Ռուսաստանի Կուրիլյան կղզիների Կուրիլսկ քաղաքից 430 կմ հյուսիս-արեւելք եւ ունեցել է 6,5 մագնիտուդ: Հաջորդ երկուսը, 6,0 եւ 6,9 մագնիտուդերով, տեղի են ունեցել Ֆիլիպպինների արեւելյան ափամերձ շրջանում: Երկրաշարժերի հետեւանքով տուժածներ եւ ավերածություններ չկան:

ՍՊԱԾ գործակալություն

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 3063 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 407 մարդ: Եղել է մանկական 190 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 45 երեխա:

Գրանցվել են 61 մահ եւ 27 դժբախտ պատահար:

Փետրվարի 28

Լենինգրադյան փողոցում տեղի ունեցած վթարի հետեւանքով մարմնական վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել 30-ամյա Հայկանուշը:

Մարտի 1

Ժավելի սպիրտից թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 20-ամյա մի քաղաքացուհի:

Երեւանի մարզասրահներից մեկում բարձրությունից ընկել եւ մեջքի սալջարդով հիվանդանոց է տեղափոխվել 25-ամյա Թ. Աթինյանը:

Մարտի 3

Շմոլ գազից թունավորումով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 49-ամյա Ա. Պետրոսյանը, իսկ 51-ամյա Հ. Կարապետյանը՝ «Արմենիա» բժշկական կենտրոն:

Ժավելի սպիրտից թունավորվել է 25-ամյա Ա. Մարտիրոսյանը, որն առաջին բուժօգնություն ստանալուց հետո, հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվելուց:

Մարտի 4

Արշակունյաց պողոտայում՝ «Գրանդ-Քենդի» խանութի մոտ վրաերթի է ենթարկվել եւ անգիտակից վիճակում «Էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխվել հիսուն տարեկան մի տղամարդ:

Քիմիական նյութից թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 23 տարեկան է. Աղաջանյանը:

Մարտի 5

Իտալիայի փողոցում վթարի է ենթարկվել 70-ամյա Գ. Անանյանը, որը դիմային ծնոտի վնասվածքով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:



Մարտի 4-ին հանրապետության շրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ՝ 1-10 մմ:

Ամենաբարձր ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում գրանցվել է՝ +15...+20, Տավուշում՝ +13..+18, Արարատյան դաշտում, Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ +11..+16, լեռնային շրջաններում՝ +1...+ 6 ºC:

Ամենացածր ջերմաստիճանը լեռնային շրջաններում գրանցվել է -10...-15 (Մասրիկ -18, Աշոցք -20), Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ -2...-7, Արարատյան դաշտում և Տավուշում՝ 0..-5, Սյունիքի հովիտներում և Արցախում՝ -1...+4 ºC:

Մարտի 7-11-ը սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին հարավ-արեւմտյան՝ 2-7 մ/վրկ: Օդի ջերմաստիճանն աստիճանաբար կբարձրանա 2-4 աստիճանով:

Խմենք մեր սիրելի ու քաղցր կանանց կենացը

ëÏÇ½µÁª 1-ÇÝ ¿çáõÙ

***

Սուլթանը ողջ աշխարհից բերված մարգարիտների մի չնաշխարհիկ հավաքածու ուներ ու ոսկե վանդակում ապրող մի հրեղեն թռչուն: Օրերից մի օր սուլթանը մոռանում է փակել վանդակը, եւ թռչունը, վերցնելով մարգարիտներով լի զարդատուփը, փախչում է: Նա թռչում է դեպի արեւը, այրում թեւերը եւ ընկնելիս կտուցից ցած գցում զարդատուփը: Այն բացվում է, եւ մարգարիտները տարածվում են ողջ աշխարհով մեկ:

Ուրեմն՝ խմե՛նք այն մարգարիտների կենացը, որոնք շրջապատում են մեզ ու զարդարում մեր կյանքը:

***

Երբ կինը քայլում է փողոցով հպարտորեն վեր բարձրացված գլխով՝ նշանակում է, որ նա ունի տղամարդ: Երբ կինը քայլում է փողոցով եւ ժպտում՝ նշանակում է, որ նա կունենա տղամարդ:

Ուրեմն, եկե՛ք խմենք հպարտորեն ժպտացող կանանց կենացը:

***

Մի անգամ տղամարդը գալիս է Աստծո մոտ եւ խնդրում, որ իր համար կին ստեղծի, որպեսզի ամուսնանա նրա հետ: Աստված վերցնում է արեւի լույսը, լուսնի խորհրդավոր փայլը, աղավնու քնքշությունը, սպիտակաթույր կարապի գեղեցկությունը, զեփյուռի հովը, փետուրի թեթեւությունը, ավելացնում կաչաղակի շատախոսություն, սոխակի դայլայլ, անձրեւի կաթիլներ, կայծակի ու ամպրոպի սարսափ եւ այս ամենը խառնելով՝ ստեղծում կնոջը: Աստված նրա մեջ շունչ է փչում եւ տալով տղամարդուն ասում. «Ա՛ռ ու տանջվի՛ր»:

Խմե՛նք Աստծո պատրաստած հիանալի խառնուրդի կենացը:

***

Աքսիոմ 1. Կանայք թերություններ չունեն:

Աքսիոմ 2. Եթե այնուամենայնիվ, թերություններ կան, ապա դրանք քաղցր են:

Աքսիոմ 3. Դրա համար արժե խմել:

Հետեւանք 1. Ով չի ուզում խմել դրա համար, ապա լուրջ թերություններ ունի:

Հետեւանք 2. Լուրջ թերություններ ունի այն տղամարդը, ով զուրկ է կանանց ուշադրությունից:

Հետեւանք 3. Ինչպես էլ վերաբերվելու լինենք կանանց, ամեն դեպքում, արժե՛ խմել:

***

Սուլթանի հարեմը գտնվում էր պալատից 5 կմ հեռավորության վրա: Ամեն օր սուլթանն ուղարկում էր իր ծառային կանանցից մեկի հետեւից:

Սուլթանն ապրեց 100 տարի, իսկ ծառան՝ 30:

Եզրակացություն. տղամարդը հալումաշ է լինում ոչ թե կնոջ, այլ նրա ետեւից վազելու պատճառով:

Ուրեմն, եկե՛ք խմենք կարճ ճանապարհների կենացը:

***

Բժիշկ-կանայք խմում են մինչեւ զարկերակի վերջը:

Քիմիկոս-կանայք խմում են մինչեւ ռեակցիայի վերջը:

Մաթեմատիկոս-կանայք խմում են մինչեւ անվերջություն:

Ուրեմն, եկե՛ք խմենք ֆիզիկոս-կանանց կենացը, ովքեր խմում են մինչեւ դիմադրության վերջը:



***

Լավ գինին եւ լավ կինը շատ ընդհանրություններ ունեն: Երկուսն էլ կարող են պտտեցնել գլուխը, ստիպել, որ տղամարդն անհավանական բաներ անի եւ երկուսն էլ թանկ արժեն:

Խմե՛նք մեր թանկագին կանանց կենացը:

***

Ասում են, թե Աստված կանանց ստեղծելիս, նրանցից յուրաքանչյուրի մեջ մի կտոր շաքար է դնում: Մի օր նա սխալվում է եւ երկու կտոր շաքար է ավելացնում: Այդ օրից ի վեր բոլոր տղամարդիկ փնտրում են հենց այդ՝ ավելի քաղցր կնոջը:

Խմե՛նք մեր սիրելի ու քաղցր կանանց կենացը:

***

Կյանքում ամենալավն ու ամենավատը կապված է կանանց հետ: Իսկ լավից ու վատից բացի, ուրիշ ի՞նչ կա կյանքում:

Խմե՛նք, ուրեմն, կանանց կենացը, որոնք պարգեւում են եւ՛ տխրություն, եւ՛ ուրախություն, եւ՛ նոր կյանք:



***

Կային-չկային մի ավազակ ու մի քահանա: Ավազակը սիրահարված էր միանձնուհուն, իսկ քահանան՝ ավազակի քրոջը: Երկու զույգերն էլ ամուսնանում են, եւ որոշ ժամանակ անց քահանան դառնում է ավազակ, իսկ ավազակը՝ քահանա:

Խմե՛նք այն կանանց կենացը, որոնք կարող են սուրբ դարձնել ցանկացած ավազակի եւ գայթակղել ցանկացած սրբի:

***

Իսկական ադամանդը թանկարժեք շրջանակի է արժանի:

Եկե՛ք բաժակ բարձրացնենք նրա համար, որ յուրաքանչյուր տղամարդ կարողանա արժանի շրջանակ դառնալ իր ադամանդի համար:

***

Ասում են, որ ինչքան շատ են կնոջը ընծաներ նվիրում, նա այնքան ավելի թանկագին է դառնում:

Մաղթե՛նք, որ տղամարդիկ որքան հնարավոր է շատ նվերներ տան իրենց կանանց, որպեսզի տեր դառնան անհատնում գանձի:

***

Պիեռ Օգյուստեն Բոմարշեն գրել է. «Բնությունը կնոջն ասել է. «Եղի՛ր սքանչելի, եթե կարող ես, եղի՛ր իմաստուն, եթե ուզում ես, բայց խելամիտ լինել՝ պարտավոր ես»:

Եկե՛ք բարձրացնենք գավաթները մեր հիասքանչ, իմաստուն եւ խելամիտ կանանց համար:

***

Աստված Հնդկաստանի կանանց ստեղծել է աշխատասեր, Աֆրիկայի կանանց՝ կրքոտ, ֆրանսուհիներին՝ նրբաճաշակ, գերմանուհիներին՝ տնարար, իսկ ամերիկուհիներին՝ գործարար:

Խմե՛նք, ուրեմն, հայ կանանց կենացը, որոնց մեջ միավորվում են այս բոլոր հատկությունները:

***

Կնոջ զենքը հագուստն է:

Եկե՛ք խմենք համընդհանուր զինաթափման կենացը:

Մի խումբ սթափ մարդիկ



Փրկարաներին օգնում են պայծառատեսները

Աշխարհի մի շարք երկրներում արտակարգ իրավիճակների ժամանակ, որպես վերջին հույս, ընդունված է դիմել արտասովոր ունակություններով օժտված մարդկանց՝ մասնավորապես պայծառատեսներին: Այս միջոցն իրեն շատ լավ է դրսեւորել հատկապես լեռներում, անտառում կամ անապատում անհետ կորած մարդկանց գտնելու հարցում: Հայտնի են աղետի մեջ հայտնված մարդկանց փրկության զարմանալի դեպքեր, երբ նրանց օգնել են գտնել էքստրասենս-պայծառատեսները:

ØáÉáñí³ Í »ñÏñ³µ³ÝÝ»ñÁ

Անցյալ դարի 50-ական թվականներին Արալյան ծովի մերձակայքում, ավելի ճիշտ՝ Կարակում անապատում, երկրաբաններն արդեն ավարտել էին իրեն աշխատանքը եւ սպասում էին ավտոմեքենայի, որն իրենց պետք է հասցներ շուրջ 50 կմ հեռավորության վրա գտնվող կայանը: Մեքենան ինչ-ինչ պատճառներով ուշանում է, եւ երկրաբանների դաշտային ջոկատի հրամանատարը, որը Ռուսաստանից մի երիտասարդ աղջիկ էր, որոշում է իր չորս հոգանոց խումբը տեղ հասցնել ոտքով: Տեղանքը նրան ծանոթ էր: Սակայն այդ ճանապարհը կարելի էր հաղթահարել միայն գիշերով կամ վաղ առավոտյան, քանի դեռ ասիական բարկ արեւը չէր հասցրել այրելու չափ տաքացնել գետինն ու օդը:

Մթով ճանապարհ ընկնելուց եւ ողջ գիշեր քայլելուց հետո՝ առավոտյան խմբի անդամները հասկանում են, որ մոլորվել են: Շատ շուտով նրանք կարող էին մահանալ, քանի որ իրենց հետ վերցրած խմելու ջրի փոքրիկ պաշարն արդեն վերջանալու վրա էր: Նրանց բախտն այնքանով է բերում, որ մոտակայքում երկրաբանները մի հին ղազախական դամբարան են գտնում՝ կավից պատրաստված ոչ մեծ կառույց, որի մեջ քիչ ավելի զով էր, քան դրսում:

Երկրաբանների հեռանալուց հետո ավտոմեքենան գալիս է նրանց հետեւից, ու նրանց չգտնելով, դատարկածեռն վերադառնում կայան: Այնտեղ գտնվող արշավախմբի ղեկավարը տագնապ է բարձրացնում: Օրեր շարունակ նրանց փնտրում էին դաշտային ճամբարի մոտակա շրջաններում: Ամեն ինչ զուր էր:

Այդ ժամանակ որոշում են դիմել տեղի բնակիչներից մեկի՝ Թենգիզ Սուլթանբեկովի օգնությանը: Նա մի հավատացյալ մահմեդական էր, որն օգնում էր երկրաբաններին խաղողի սովորական վազի օգնությամբ գտնել ստորգետնյա ջրերի վայրը: Թենգիզը մի ավտոմեքենա է խնդրում եւ ուղեւորվում երկրաբանների դաշտային կայան: Այնտեղ նա նամազ է անում, որից հետո իրեն ուղեկցող արշավախմբի ղեկավարին հարցնում է, թե արդյոք կորածների մեջ կայի՞ն մահմեդական կրոնի հետեւորդներ: Վերջինս պատասխանում է, որ արշավախմբի խոհարարուհին մի ղազախ կին էր, մահմեդական, եւ նա կանոնավոր կերպով աղոթում էր: «Ուրեմն՝ ամեն ինչ ճիշտ է»,- ասում է Սուլթանբեկովը եւ վարորդին հրամայում մեքենան վարել իր ասած ուղղությամբ: Մոտ 15 կիլոմետր ճանապարհ անցնելուց հետո նրանք տեսնում են վերը նշված դամբարանը, որի միջից դուրս են վազում ավտոմեքենայի աղմուկը լսած երկրաբանները:

Նրանք փրկված էին, իսկ երբ Թենգիզին հարցնում են, թե նա ինչպե՞ս կարողացավ անծայրածիր անապատում այդքան արագ գտնել մարդկանց, նա պատասխանում է. «Ալլահի օգնությամբ: Ամենաբարձրյալը լսել էր փրկության մասին ձեր աղոթքները»: Նա մատնացույց է անում ղազախ խոհարարուհուն, որն իսկապես այդ ամբողջ ժամանակ աղոթում էր:

²íÇ³íÃ³ñ ²Ý¹»ñáõÙ

1972 թ. հոկտեմբերի 13-ին Ուրուգվայի «Ֆեյրչայլդ» ավիաընկերությանը պատկանող ինքնաթիռն օդ է բարձրանում Մոնտեվիդեոյի թռիչքուղուց եւ ուղղություն վերցնում դեպի Չիլիի մայրաքաղաք Սանտյագո: Օդանավում 45 ուղեւոր կար, իսկ անձնակազմը բաղկացած էր հինգ մարդուց: Դա հատուկ չվերթ էր, որով տեղի ռեգբիի հավաքականը մեկնում էր չիլիացիների հետ ընկերական խաղի:

Չնայած ճանապարհին ընդամենը երկու ժամ էր տեւելու, դա այնքան էլ անվտանգ չէր, քանի որ Հարավային Ամերիկայի երկնքի այդ հատվածում պայմաններն օդաչուների համար այնքան էլ բարենպաստ չեն: Նրանք պետք է բավականաչափ վարպետություն ունենան, որպեսզի կարողանան հաղթահարել լեռների արգելքը եւ կտրուկ իջնել դեպի Խաղաղ օվկիանոս:

Այս անգամ շտուրմանը հավանաբար չվերթի ճանապարհը կազմելիս ինչ-որ սխալ էր թույլ տվել, քանի որ ամպերի միջից դուրս գալուց հետո օդանավի հրամանատարն իր առջեւ տեսնում է լեռան՝ արագորեն մոտեցող գագաթը: Հաշված վայրկյանների ընթացքում նա հասցնում է ինքնաթիռը մի կողմ թեքել եւ խուսափել ճակատային բախումից: Սակայն օդանավի թեւը դիպչում է լեռան գագաթին եւ վնասվում: Ինքնաթիռը սկսում է սրընթաց կերպով ներքեւ իջնել: Անխուսափելի մահից մարդկանց փրկում է միայն լեռան լանջին աճած խիտ բուսականությունը, որի վրա ընկնելով՝ ինքնաթիռը կտոր-կտոր է լինում ու շարունակում սահել ներքեւ:

Ուշքի գալով՝ մարդիկ հասկանում են, որ իրենցից շատերը փրկվել են: Մահացել էր տասնյոթ մարդ, մի քանիսը վիրավոր էին: Ողջ մնացածները վստահ էին, որ օգնությունը շուտով տեղ կհասնի, սակայն նրանք սխալվում էին...

Օդանավի որոնումները սկսվում են հերթապահի էկրանից դրա անհետանալուց եւ կապի ընդհատումից անմիջապես հետո: Մի քանի օր շարունակ փրկարարական խումբն անարդյունք որոնումներ էր իրականացնում Անդերում: Ինքնաթիռը կարծես գետնի տակ էր անցել:

Փրկարարներին էին միացել նաեւ անհետ կորածների հարազատները: Տուժածներից մեկի մայրը դիմում է Մոնտեվիդեոյում ապրող մի տարիքավոր տղամարդու, որը կարողանում էր ուռենու ճյուղերի օգնությամբ հայտնաբերել ջրի ստորգետնյա աղբյուրները: Կինը նրան ցույց է տալիս լեռների քարտեզը, որտեղ տեղի էր ունեցել աղետը, եւ պայծառատեսը մատնանշում է ինքնաթիռի անկման վայրը: Սակայն խեղճ կինը չի կարողանում իշխանություններին համոզել, որ այնտեղ փրկարարներ ուղարկեն: Նրան քաղաքավարի կերպով մերժում են ու պատասխանում, որ լեռների այդ հատվածն արդեն ստուգվել է:

Աղետից մեկ շաբաթ անց կորածների որոնումները պաշտոնապես դադարեցվում են: Չհաշված շոկոլադի մի քանի սալիկ՝ նրանք ընդհանրապես ուտելիքի պաշար չունեին, իսկ ծարավը հագեցնում էին ձյան հալոցաջրով: Մարդիկ օր օրի թուլանում էին: Ավիավթարից փրկվածները կարող էին սովամահ լինել: Տեղի է ունենում ամենասարսափելին: Սկզբում տուժածներից մեկը, հետո նաեւ մյուսները սկսում են ուտել զոհված ուղեւորների դիակների մնացորդները:

Անցնում է երկու ամիս: Օգնություն այդպես էլ չկա: Ողջ մնացածների մեծ մասը մահանում է հիվանդություններից կամ քաղցից: Ոմանք այդպես էլ չեն կարողանում իրենց ստիպել մարդու միս ուտել: Երեք հոգի խելագարվում է:

Վերջ ի վերջո, տասնվեց ողջ մնացածներից երկուսն իրենց մեջ ուժ են գտնում իջնել Անդերի ձյունապատ լեռներից եւ հայտնվում են մի փոքրիկ գյուղում: Այնտեղ ժամանած իշխանության ներկայացուցչի եւ բժշկի ուղեկցությամբ հեծյալների մի ջոկատ ուղարկվում է աղետի վայր: Վթարի ենթարկված օդանավի ուղեւորները մեծ դժվարությամբ կարողանում են վերադառնալ իրենց տները: Ընդհանուր առմամբ, նրանք Անդերում անցկացնում են տասը երկար ու ծիգ տանջալի շաբաթ:

Օդանավի հայտնաբերված սեւ արկղերի ծածկագրերի վերծանումը ցույց է տալիս, որ դրա կործանման պատճառն անձնակազմն էր, որն անտեսել էր հերթապահի՝ Անդերին մոտենալու մասին նախազգուշացումը: Հետաքննության ընթացքում ուղեւորների եւ նրանց հարազատների կարծիքները հաշվի չեն առնվում: Փրկված ուղեւորները, իմանալով, որ պայծառատեսը ճիշտ է մատնացույց արել կործանված ինքնաթիռի տեղը, վրդովվում են ու դատական գործ հարուցում փրկարար ծառայության ղեկավարի դեմ: Դատավորը համաձայնում է այն մտքի հետ, որ պայծառատեսն իսկապես ճիշտ էր ցույց տվել աղետի վայրը, սակայն նշում է, որ փրկարարները գործել են իրենց հրահանգների համաձայն, որտեղ ոչինչ ասված չէ փրկարարական աշխատանքներին պայծառատեսներ ներգրավվելու մասին:

Զոհված մարզիկների հարազատները ստիպված են լինում բավարարվել նրանցից յուրաքանչյուրի համար որպես փոխհատուցում տրված 500 հազար դոլարով:

Պատրաստեց
Գոհար Բաղդասարյանը

Armenian Red Cross Society
Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն

Տուժածի զննում

Յուրաքանչյուր արտակարգ իրավիճակում տուժածին արդյունավետ օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ է պարզել, թե նա ինչ վնասվածքներ ունի եւ ինչ վիճակում է, այսինքն՝ անհրաժեշտ է կատարել տուժածի զննում: Այս համարում մենք կքննարկենք անգիտակից տուժածի զննումը եւ նրան օգնություն ցույց տալու քայլերը:

Տուժածին զննելիս առաջին հերթին պետք է ստուգել կենսական կարեւոր համակարգերի գործունեությունը: Այս զննումն անվանում ենք առաջնային, որի ժամանակ պարզվում են կյանքին անմիջական վտանգ սպառնացող իրավիճակները:

Մարդու մարմնի կենսագործունեության համար անհրաժեշտ է թթվածին: Թթվածնի անհրաժեշտ քանակի ապահովումն իրականացվում է նյար-



դային, շնչառական եւ սրտանոթային համակարգերի համատեղ գործունեության շնորհիվ: Եթե այս համակարգերի գործունեությունը լրջորեն խանգարվի, թթվածնի մատակարարումը կտրուկ կնվազի, իսկ դա կարճ ժամանակում կարող է հանգեցնել մահվան: Ելնելով սրանից՝ այս համակարգերն անվանում են կենսական կարեւոր:

Տուժածին զննելիս առաջին հերթին պետք է ստուգել կենսական կարեւոր համակարգերի գործունեությունը, այսինքն՝ գիտակցությունը, շնչուղիների անցանելիությունը եւ շնչառությունը, անոթազարկն ու ուժեղ արյունահոսության առկայությունը:

Նախ անհրաժեշտ է հնարավորինս արագ հայտնաբերել եւ դադարեցնել ուժեղ արյունահոսությունը: Ուժեղ արյունահոսության առկայությունը պարզելու համար ուշադիր զննեք տուժածին ոտքից գլուխ: Սովորաբար այն ակնհայտորեն երեւում է շիթով բխող արյան, գոյացած արյան լճակի տեսքով:

Այնուհետեւ ստուգեք տուժածի գիտակցությունը: Այդ նպատակով զգուշորեն բռնեք տուժածի ձեռքը, ցնցեք նրա ուսը: Խոսեք նրա հետ, տվեք պարզ հարցեր եւ հրահանգներ. «դու ինձ լսո՞ւմ ես, եթե լսում ես, աչքերդ բացիր, ձեռքս սեղմիր, որեւէ նշան տուր»:

Եթե տուժածը ոչ մի կերպ չի արձագանքում, նշանակում է՝ նա անգիտակից վիճակում է: Այդ դեպքում տուժածի մկանները, նաեւ լեզուն, թուլանում են: Եթե տուժածը պառկած է մեջքի վրա, նրա լեզուն հետ է գնում դեպի ըմպան՝ փակելով շնչուղիները: Ժողովրդի մեջ ընդունված է այն կարծիքը, թե գիտակցությունը կորցրած տուժածի լեզուն կուլ է գնում: Եվ մարդիկ փորձում են տարբեր կերպ բացել տուժածի բերանը, լեզուն բռնել՝ վնասելով տուժածին: Մի՛ արեք նման բան: Կարելի է ավելի հեշտ ու անվնաս օգնություն ցույց տալ:

Շնչուղիների բացում կատարելու համար ձեր մի ձեռքը դրեք տուժածի ճակատին, իսկ մյուս ձեռքով բռնելով

կզակից՝ գլուխը զգուշությամբ հետ տարեք, կզակը բարձրացրեք: Այս գործողության շնորհիվ լեզուն ազատում է շնչուղիների մուտքը: Բութ մատը տեղադրեք ստորին շրթունքից ներքեւ եւ զգուշորեն բացեք տուժածի բերանը: Անհրաժեշտության դեպքում անձեռոցիկով կամ թաշկինակով մաքրեք տուժածի բերանում կուտակված լորձը, հեղուկները եւ այլն:

Անչափահասների դեպքում գլուխը պետք է ավելի քիչ հետ տանել, իսկ ծծկերների մոտ բարձրացնել միայն կզակը:

Շնչուղիները բացելուց հետո, առանց գլխի դիրքը փոխելու ստուգեք տուժածի շնչառությունը: Մոտեցրեք ձեր ականջը տուժածի բերանին, հայացքն ուղղեք նրա կրծքավանդակին

եւ որովայնին: Փորձեք տեսնել, լսել եւ այտով զգալ շնչառությունը 5-10 վայրկյանի ընթացքում:

Տուժածի զննման մյուս քայլն անոթազարկի ստուգումն է: Անգիտակից տուժածի անոթազարկը նպատակահարմար է շոշափել քնային զարկերակի վրա: Անոթազարկը ստուգելու

համար 2 կամ 3 մատները (բացի բութ մատից) պարանոցի ամենաբարձր կետից սահեցրեք կողք՝ պարանոցի կողմնային մասում գտնվող ակոսի մեջ:

Եթե մի կողմից անհնար է շոշափել անոթազարկը, փորձեք դա անել մյուս կողմից: Հիշե՛ք, չի կարելի սեղմել 2 քնային զարկերակները միաժամանակ:

Ծծկեր երեխաների անոթազարկը ստուգում են գաղտունի վրա կամ բազկի միջին մասում, ներսի կողմից:

Եթե մարդ կորցրել է գիտակցությունը...

Գիտակցության կորուստը մարդու կյանքին սպառնացող վիճակ է: Դրա պատճառ կարող են լինել բազմաթիվ վնասվածքները եւ հիվանդությունները, ինչպես օրինակ՝ սրտի աշխատանքի խանգարումները, գլխուղեղի վնասվածքները, հանկարծահաս հիվանդագին վիճակները:

Բացի այն, որ անգիտակից տուժածի բոլոր մկանները թուլանում են, եւ եթե նա մեջքի վրա է պառկած, լեզուն կարող է հետ գնալ ու փակել շնչուղիները, նրա մոտ բացակայում են նաեւ կլլման ու հազի ռեֆլեքսները: Դրա հետեւանքով փսխման զանգվածները, արյունը կամ այլ հեղուկներ կարող են խցանել շնչուղիները, ինչը շնչառությունը դադարելու պատճառ կարող է լինել:

Անգիտակից, բայց շնչող տուժածին պետք է բերել կողքի ապահովության դիրքի: Պարզելով, որ մարդը չունի գիտակցություն, բայց շնչում է, առանց ժամանակ կորցնելու նրան շրջեք կողքի ապահովության դիրքի: Այն հնարավորություն է տալիս ապահովել շնչուղիների անցանելիությունը եւ բերանի խոռոչի պարունակության արտահոսքը: Այդ դիրքի բերելու համար տեղավորվեք տուժածի մարմնին մոտ, ձեր կողմի ձեռքը բացեք նրա մարմնի նկատմամբ մոտավորա-

պես ուղիղ անկյան տակ եւ բռնելով նրա՝ ձեզնից հեռու կողմի ուսից ու կոնքից՝ տուժածին համաչափ շրջեք դեպի ձեզ՝ կողքի: Վերեւում հայտնված ոտքը ծալեք եւ դրեք մյուս ոտքին:

Տուժածի շնչուղիների անցանելիության ապահովման նպատակով բռնեք նրա ճակատից եւ կզակից, հետո գլուխը զգուշությամբ հետ տարեք՝ մի-

աժամանակ դեմքը շրջելով դեպի ներքեւ, եւ բացեք նրա բերանը: Շրջելուց հետո տուժածը պետք է հենված լինի ծալված ոտքի եւ ուսի վրա: Տարբերություն չկա, թե որ կողմի վրա դուք կշրջեք տուժածին: Սակայն, եթե տուժածը հղի կին է, ապա նրան պետք է շրջել ձախ կողմի վրա:

Տուժածի շնչուղիների անցանելիությունն ապահովելու համար գլուխը զգուշությամբ հետ տարեք՝ միաժամանակ դեմքը շրջելով դեպի ներքեւ: Բացեք նրա բերանը:

Կողքի ապահովության դիրքի բերելիս զգույշ եղեք, հատուկ ուշադրություն դարձրեք գլխին եւ պարանոցին: Հնարավորության դեպքում տուժածին շրջեք առնվազն 2 հոգով, որոնցից մեկը պետք է պահի գլուխը:

Կողքի ապահովության դիրքի բերելուց հետո անհրաժեշտ է պահպանել տուժածի մարմնի նորմալ ջերմաստիճանը, որի համար կարելի է նրա վրա ծածկոց գցել:

Գիտակցության բացակայությունը լուրջ իրավիճակ է, եւ յուրաքանչյուր դեպքում պետք է ահազանգել շտապօգնություն: Մինչեւ մասնագիտական օգնության ժամանումը վերահսկեք տուժածի վիճակը՝ պարբերաբար ստուգելով նրա անոթազարկը, շնչառությունը եւ գիտակցությունը:

Ինչպես արդեն ասվեց, անգիտակից տուժածի մոտ բացակայում են կլլման եւ հազի ռեֆլեքսները, այդ իսկ պատճառով չի կարելի անգիտակից տուժածին խմեցնել, կերակրել կամ նրա մոտ փսխում առաջացնել:

Անոթազարկը ստուգելով կարող եք գաղափար կազմել սրտի աշխատանքի մասին: Փորձեք հաշվել անոթազարկի հաճախականությունը: Նորմալ վիճակում անոթազարկի հաճախությունը որպեւում հետեւյալն է.

- չափահաս՝ 60-85 զարկ.
- անչափահաս՝ 80-110 զարկ.
- ծծկեր՝ 120-140 զարկ:

Շնչառությունը ստուգելու համար ձեռքը դրեք տուժածի որովայնին եւ հաշվեք շնչառական շարժումները: Նորմալ վիճակում անոթազարկի հաճախականությունը որպեւում հետեւյալն է.

- չափահաս՝ 14-18 շնչառական շարժում.
- անչափահաս՝ 20-25 շնչառական շարժում.
- ծծկեր՝ 40-60 շնչառական շարժում:

Շնչառության եւ սրտի աշխատանքի նորմայից շեղումները խոսում են տուժածի վիճակի փոփոխության մասին: Եթե ժամանակի ընթացքում դրանք դանդաղում են կամ արագանում, դառնում անկանոն, ապա տուժածը կարճ ժամանակում կարող է ունենալ սրտի կամ շնչառության կանգ, եւ ընդհակառակը՝ վիճակը կարող է բարելավվել, անգամ գիտակցությունը վերականգնվել: Ուստի դրան պե՛տք է ուշադրություն դարձնել:

Վերահսկման տվյալները գրանցեք եւ առաջնային ու երկրորդային զննման տեղեկությունները հանձնեք ժամանող շտապօգնության անձնակազմին:

Առաջնային զննում կատարելուց եւ անհրաժեշտության դեպքում համապատասխան անհապաղ օգնություն ցույց տալուց հետո պետք է կատարել երկրորդային զննում՝ հայտնաբերելու համար տուժածի կյանքին անմիջական չսպառնացող վնասվածքները եւ վիճակները: Երկրորդային զննման քայլերն ավելի մանրամասն կքննարկենք հաջորդ համարներում:

Այսպիսով, անգիտակից տուժածին օգնելու համար պետք է նրան շրջել կողքի դիրքի եւ անընդհատ վերահսկել նրա վիճակը, մինչեւ շտապօգնության ժամանումը:

«Կոսպատրիկ» առագաստանավի ճակատագիրը



«Կոսպատրիկ» կլիպերը (եռակայմանոց արագընթաց առագաստանավ) 1856 թվականին կառուցված, «օվկիանոսի որսկան շների» հարյուրյակին դասվող նավ էր:

1874 թվականի սեպտեմբերի 11-ին «Կոսպատրիկը», դուրս գալով Թեմզայից, ուղղություն վերցրեց դեպի Անտիպոդ (Նոր Զելանդիա): Նավում կար 433 ուղեւոր, այդ թվում՝ 127 երեխա, եւ անձնակազմի 42 անդամ:

Ինչպես «Կոսպատրիկում», այնպես էլ անգլիական մյուս առագաստանավերում, հակահրդեհային անվտանգության կանոնները շատ խիստ եւ ճշտապահորեն պահպանվում էին. գիշերային ժամերին արգելվում էր ծխել ու օգտվել բաց պատուհաններից: Ամեն գիշեր պարբերաբար հերթապահության էին կանգնում ուղեւորական տվինդեկները: Նավում արգելվում էր օգտվել մոմերից, նույնիսկ պահել դրանք անձնական իրերում:

Առագաստանավի քթամասում տեղադրված էր հրդեհաշիջման մեքենա, իսկ տախտակամածի տարբեր մասերում՝ հակահրդեհային կաշեփողեր եւ դույլեր: Հակահրդեհային անվտանգության տեսանկյունից «Կոսպատրիկը» համարվում էր անվտանգ ուղեւորատար առագաստանավ:

Նոյեմբերի 16-ի երեկոյան, «Կոսպատրիկի» տախտակամածին ուղեւորները տոնախմբություն էին կազմակերպել: Արդեն բավական ուշ էր, երբ նրանք գնացին քնելու:

Երկրորդ շտուրման Մակդոնալդը գնաց ուղեւորական տվինդեկները ստուգելու: Կլիպերում նման ստուգումը վաղուց էր սահմանված եւ անցկացվում էր ցանկացած հանգամանքում: Համոզվելով, որ ամեն ինչ կարգին է, նա գնաց քնելու: Հանկարծ լսվեց. «հրդե՜հ, հրդե՜հ»:

Ֆորպիկայի հորից քուլա-քուլա ծուխ էր դուրս գալիս: Երբ նավապետը դուրս եկավ տախտակամած, նավաստիներն արդեն գործի էին դրել հրդեհաշիջման մեքենան: Այրվում էր պահեստային այն հարկաբաժինը, որտեղ պահվում էին առագաստները, ճոպանները, ներկերը եւ ձյութը: Ենթադրվում էր, որ պահեստում գտնվող դյուրավառ նյութերից տեղի էր ունեցել ինքնաբռնկում:

Հրդեհի տարածումը կանխելու նպատակով նավապետը հրահանգեց ձեռնարկել համապատասխան հրդեհաշիջման միջոցառումներ:

Երբ նավաստիները գործի դրեցին հրդեհաշիջման մեքենան, հասկացան, որ դրանից ոչ մի օգուտ չկա: Նրանք ամբողջ ուժով պոմպից ջուր էին քաշում, բայց այն հասնում էր առանց ճնշման եւ ոչ բավարար քանակությամբ: Հրդեհային պոմպերի մխոցները երկար ժամանակ մնալով տախտակամածին՝ արեւի տակ չորացել էին:

Բաքի վրա հայտնվեցին կրակի լեզուներ: Արեւադարձային գիշերվա խավարում դրանք այնքան սարսափեցնող էին, որ նույնիսկ անվախների մեջ ահ էին ներշնչում:

Նավում վախն ու խուճապն ավելի արագ տարածվեցին, քան կրակը: Կիսահագնված ուղեւորները վայնասունով դուրս թափվեցին տախտակամած:

Կրակը սպառնում էր նավախելի առաջամասի առագաստներին: Ամբողջ տախտակամածը լցված էր ուղեւորներով: Նավաստիները դես ու դեն էին վազում, փորձում էին հրդեհը մարել: Ուղեւորներից մեկին թվաց, թե իրենց կյանքը փրկելու նպատակով նավաստիները նավի քթամասում ինչ-որ բան են ձեռնարկում: Ամբոխը սկսեց նավաստիներին խանգարել, թույլ չտալով, որ հրդեհը մարեն: Նավաստիների եւ ուղեւորների միջեւ սկսվեց ծեծկռտուք:

Նավապետը բաց թողեց թանկարժեք րոպեները, ինչն էլ խուճապի առիթ եղավ. նա կորցրեց մարդկանց նկատմամբ իշխանությունն ու ստեղծված իրավիճակի կառավարումը: Նրա ճակատագրական սխալն այն էր, որ կլիպերում հրդեհի մարման համար կոնկրետ գործողություններ չմշակվեցին:

Նավաստիները զուր էին ջանքեր թափում հրդեհի տարածումը կանխելու համար: Պահեստից ներքեւ գտնվող բաժիններում կրակը նոր «զոհեր» էր փնտրում: Տախտակամածի մի մասը գրավելով, կրակը սողաց նավախելի կողմը:

Նավապետը քարացած ինչ-որ կետի էր նայում: Թվում էր, թե նա չի գիտակցում, որ նավն այրվում է, եւ որ այդ պահին որոշվում է «Կոսպատրիկի» ճակատագիրը: Նա հրամայեց առանց իր թույլտվության ոչ մի նավակ չիջեցնել ջուրը:

Կրակը գնալով իր համար նոր ճանապարհներ էր հարթում: Մարդիկ նահանջում էին: Փրկվելու հնարավորությունները նվազում էին, հարկավոր էր անհապաղ նավակները ջուրն իջեցնել:

Հանկարծ կրակը դուրս պրծավ նավամբարի քթամասից: Անմիջապես տախտակամածը, ելուստը եւ փրկամակույկները բռնկվեցին: Մարդկային ամբոխը փորձում էր ուժով լցվել չվնասված մակույկները: Ուղեւորներից շատերը դառնում էին դեսուդեն վազող ամբոխի զոհ:

Նավապետն այդպես էլ չէր գիտակցում ստեղծված ողբերգական իրավիճակը: Թվում էր, թե նա դեռ ինչ-որ բանի հույսեր էր փայփայում: Մակույկները ջուրն իջեցնելու հրամանը տվեց Մակդոնալդը: Մինչ Մակդոնալդը եւ մյուս նավաստիները պատրաստվում էին աջ նավակողի բարկասն իջեցնել շքատախտակամած, մարդիկ լցվելով նավակողին կախված թիանավակը՝ այն իջեցրին ջուրը: Այդ երկար ու նեղ նավակը լցված էր մարդկանցով եւ արդեն պատրաստ էր հեռանալու, երբ նավից սկսեցին բոլորը նետվել թիանավակի վրա: Այն շուռ եկավ եւ սուզվեց: Հետո ուղեւորների մի մասը «գրավեց» աջ նավակողի նավակը, որն արդեն ամբողջությամբ լցված էր մարդկանցով: Խուճապի ժամանակ ուղեւորներից մեկը կացնով կտրեց ամբարձիչը, եւ նավակը քթամասով ընկավ ջրի մեջ: Խեղդվեց մոտ 80 մարդ: Ինչպես լողացող ջահ, նավը համաչափ ճոճվում էր օվկիանոսի ալիքների վրա:

Այնուհետեւ կրակը գաղտագողի մոտեցավ նավակի քթամասին, որը ծխաց եւ ածխացավ: Մոտ 40 մարդ ուղղակի թափվեց ավագ օգնականի կողմից իջեցված մակույկի մեջ: Ավագ օգնականը եւ երկրորդ շտուրմանը եւս ակամա հայտնվեցին մակույկի մեջ: Հետագայում Մակդոնալդը դատարանում հայտարարեց, որ իրեն տախտակամածից ուղակի հրել են մակույկը:

Մակդոնալդն այդ տեսարանն այսպես էր նկարագրել. «Մենք համարյա թե խլացանք նավում մնացած մարդկանց կանչերից: Բայց ոչինչ անել չկարողացանք: Հրդեհի բոցերն արտացոլվեցին ջրում, եւ տեսանք շնաձկների: Մարդիկ գերադասեցին մնալ այրվող նավի վրա...»:

* * *

Երբ լուսացավ, «Կոսպատրիկից» ոչ հեռու նկատվեց ջրում լողացող, ածխացած քթամասով դատարկ մի մակույկ: Մակդոնալդը փրկվածների մի մասին տեղավորեց այդտեղ:

«Կոսպատրիկը» երեք օր շարունակ այրվում էր, եւ զարմանալին այն էր, որ այնտեղ դեռ կենդանի մարդիկ կային: Ինչ-որ ձեւով կրակը որոշ տեղեր չէր հասել:

Փրկվածներից մի քանիսն ապրումներից խելագարվեցին եւ ծարավի տանջանքներին չդիմանալով գլուխները կորցրեցին:

Մակդոնալդը հույս ուներ, որ այրվող նավի բոցերը կգրավեն այլ նավերի ուշադրությունը, բայց հորիզոնում ոչ մի նավի ուրվագիծ չերեւաց:

Երբ «Կոսպատրիկն» ամբողջությամբ այրվեց, այն սկսեց սուզվել: Մակդոնալդը տեսավ, թե ինչպես նավի կայմից ջուրը նետվեց մի քանի մարդ, այդ թվում նավապետը: Դրանից հետո լսվեց ջրով ծածկվող կրակի թշշոցը: Նավը թեքվեց կողքի եւ անհետացավ ջրի մեջ…

Նավակները լողացին մինչեւ նոյեմբերի 21-ի գիշերը: Նավակներից մեկում լսվում էին հայհոյանքներ, որոնց հաջորդեց ծեծկռտուքը: Ջրի հորձանուտը նավակներն իրարից բաժանեց: Դրանցից մեկն անհետացավ խավարում…

Մակդոնալդը եւ փրկված 41 ուղեւորը հայտնվեցին գրեթե անհույս վիճակում՝ ոչ մի կաթիլ ջուր եւ 400 մղոն մինչ մոտակա ափը...

Նոյեմբերի 22-ին մակույկից մի մարդ ընկավ ջուրը ոչ ոք նրան չօգնեց... Երկու օրվա ընթացում այրվածքների ու վնասվածքների հետեւանքով մահացավ եւս 15 մարդ: Երեքը խելագարվեցին, ինչպես գրել էր իր նոթերում Մակդոնալդը. «մահացան սարսափելի տանջանքներով»: Յավանական է, որ մակույկի հրամանատարն ինքն էր նրանց տանջանքներին վերջ դրել, եւ դրա համար ոչ ոք նրան չէր կարող դատապարտել՝ խելագարությունը մյուսների համար վտանգ էր ներկայացնում:

Նոյեմբերի 24-ին բարձրացավ ուժեղ ալիք, եւ փրկվածները կորցրին իրենց ունեցած միակ թին: Այդ օրը եւս 10 մարդ մահացավ: Սկսվեց ամենասարսափելին՝ մարդակերությունը: Պարզվեց, որ կյանքի նկատմամբ ծարավն ավելի ուժեղ էր բարոյականությունից, համոզմունքներից եւ հավատքից:

Նոյեմբերի 25-ին քամին անցավ: Ամբողջ օրն արեւը խելահեղորեն այրում էր: Մեկը մյուսի հետեւից մարդիկ մահանում էին: Այդ գիշեր մակույկում մնացել էր 8 մարդ, որոնք վայրի գազաններից ոչնչով չէին տարբերվում: Ինչպես պատմել էր երկրորդ շտուրմանը, այդ օրը բոլոր մյուս օրերից ամենասարսափելին էր: Յուսահատությունից մարդիկ հարձակվում էին մեկը մյուսի վրա: Գիշերը տառապյալները մի առագաստանավ նկատեցին: Անծանոթ նավը մոտեցավ մակույկին եւ անցավ նրանց մոտով: Յավանական է, որ նավում չէին լսել մեռնողների թույլ կանչերը: Դժբախտների հուսահատությունը սահման չուներ: Նրանցից մեկը նետվեց ջուրը, որ լողալով հասնի հեռացող առագաստանավին:

Նոյեմբերի 27-ին նավակի վրա թափվեց արեւադարձային հեղեղ: Այն մարդկանց թեթեւություն բերեց՝ մարմինների վրայից մաքրելով աղը: Բայց նրանք չկարողացան ջուրը հավաքել եւ մտքներով էլ չանցավ մակույկի վրա գցել հագուստները, որ հետո այն քամեն: Այդ օրը եւս երկու հոգի մահացավ: Նավակում մնաց հինգ մարդ՝ մեկ ուղեւոր, երկու նավաստի եւ Մակդոնալդը: Ծարավը տանջում էր. երեքը որոշեցին խմել ծովի ջուրը, ինչն էլ հանգեցրեց խելագարության: Ուշ գիշերին խելագարված ուղեւորներից մեկն ատամներով բռնեց քնած Մակդոնալդի ոտքը: Ցավից շտուրմանն արթնացավ, եւ ոտքի կանգնելով, հեռվում առագաստանավ նշմարեց: Այն, իրոք, նավ էր, եւ ոչ տեսիլք: Նրանց նկատել էին:

Մակույկում գտնվող մարդիկ այնքան թույլ էին, որ չէին կարողանում առագաստանավից նետված ճոպանը բռնել: «Փրկարարները» ստիպված էին իջնել եւ օգնել նրանց: Մի քանի ժամ անց մահացավ նավաստիներից մեկը եւ խելագարված ուղեւորը:

«Կոսպատրիկի» ողբերգությունը դաս եղավ մյուս նավերի համար, որ փրկարարական նավակներում այսուհետ պարտադիր կերպով պահեստավորեն ջուր, սնունդ եւ անհրաժեշտ այլ պարագաներ:

Նաիրա Եղիազարյան

ԱՐՏԱԿԱՐԳ ... ժամանց

Երեք ժամ թափոնների բաքի մեջ

Սուրբ Ծննդյան տոների նախօրեն Այովա նահանգի 77-ամյա բնակիչ Ռոբերտ Շոֆֆն անցկացնում է կոյուղու թափոնների բաքի մեջ: Ցանկանալով հանել բաքի խցանը՝ նա այնքան ուժեղ է քաշում բռնակից, որ խցանը դուրս է թռչում, իսկ ինքը մինչեւ կրծքավանդակը մտնում է բաքի անցքի մեջ: Ռոբերտը բավական երկար մնում է գլխիվայր կախված վիճակում, մինչեւ կինը պատուհանից տեսնում է նրա՝ օդում նյարդայնորեն թափահարվող ոտքերը եւ շտապում օգնության: Շոֆֆի ուժերն արդեն սպառվում էին, իսկ կինը չէր կարողանում նրան դուրս քաշել: Բացի այդ՝ նա կարող էր խեղդվել թունավոր գազերից: Տիկին Շոֆֆն ստիպված ահազանգում է փրկարար ծառայություն, եւ վրա հասած փրկարարները բաքից դուրս են հանում գրեթե ամբողջությամբ կոյուղու պարունակության մեջ թաթախված Ռոբերտին:

Երկու ժամ շոկոլադի մեջ

Ոմանց սա կարող է երազանք թվալ, սակայն 21-ամյա Դարմին Գարսիայի համար դա իսկական մղձավանջ էր:

Նա աշխատում էր շոկոլադե քաղցրավենիք արտադրող մի գործարանում: Ուրբաթ երեկոյան կաթսայի մեջ համեմունքներ ավելացնելու ժամանակ, Դարմինը սայթաքում է եւ ընկնում տաք շոկոլադով լի հսկայական կաթսայի մեջ: Նշենք, որ այդ պահին հալած շոկոլադի ջերմաստիճանը շուրջ 45 աստիճան էր՝ ըստ Ցելսիուսի:

«Շոկոլադն ամենուր էր,- հետագայում պատմում էր Գարսիան,- ականջներիս ու քթիս մեջ, բերանում: Այն կպել էր մարմնիս ու մազերիս: Թվում էր, թե դարձել եմ 1000 կիլոգրամ: Բոլորովին չէի կարողանում շարժվել»:

Գործարանի մյուս աշխատակիցները, ոստիկանները ու հրշեջները շուրջ երկու ժամ փորձում էին ազատել Դարմինին այդ յուրօրինակ քաղցր գերությունից: Նախքան նրանց օգնության հասնելը, շոկոլադը հասցրել էր սառչել ու քարանալ: Այնպես, որ փրկարարները ստիպված էին այն նորից տաքացնել ու կակաոյի յուղի օգնությամբ թուլացնել, որպեսզի կարողանան Գարսիային հանել այնտեղից:

Չորս ժամ գանձարանում

85-ամյա մի տատիկ համարյա չորս ժամ փակված է մնացել Շվեյցարիայի բանկերից մեկի գանձարանում: Այնտեղ նրա ներկայության մասին հայտնի է դարձել միայն անվտանգության գերզգայուն համակարգի շնորհիվ, որն արձագանքել էր կնոջ շարժումներին:

Տնօրենը տատիկին ներս է ուղեկցում, որտեղ նա պետք է ինչ-որ փաստաթղթեր ուսումնասիրեր, եւ հեռանում է: Ինչպես պարզվում է՝ տատիկը, ընթերցանությամբ տարված, մոռանում է ժամանակի մասին: Բանկի տնօրենը նույնպես մոռացել էր տատիկի մասին, եւ աշխատանքային օրվա ավարտին, երբ բանկը փակվում է, տատիկը հայտնվում է երկաթ-բետոնե ծուղակի մեջ: Դրանից հետո նա դեռեւս մի քանի ժամ խորասուզված էր թղթերի ուսումնասիրության մեջ, իսկ հետո... Միանում է բանկի անվտանգության համակարգը, եւ պահակախմբի աշխատակիցները խառնվում են իրար: Գանձարանում ակամա պատանդ դարձած տատիկին ազատ արձակելուց հետո բանկի տնօրենը նրանից ներողություն է խնդրում եւ մի ծաղկեփունջ հանձնում:

Տասներկու ժամ ջրում

Մի քանի տարի առաջ ամերիկացի փրկարարները ստիպված էին գետից փրկել շուրջ 200 կգ քաշ ունեցող մի տղամարդու:

Վիսքոնսին նահանգի բնակիչ Մարտին Ռեյքին բժիշկները խորուրդ էին տվել ավելորդ քաշից ազատվելու համար ակտիվ կյանք վարել: Ահա եւ Մարտինը որոշել էր զբաղվել լողով: Նա իր երեք ընկերների հետ գնացել էր մոտակա գետը լողալու: Հանուն սեփական անվտանգության՝ Մարտինը որոշում է շատ խորը չգնալ եւ ավտոմեքենայի անվադողի հսկայական փչովի օղակով ափի մոտ մի քիչ չփչփացնել: Բայց քանի որ նա դժվարությամբ էր շարժվում, գետի ուժեղ հոսանքը չաղլիկ Մարտինին քշում է ափից բավական հեռու: Սա դեռ հերիք չէր, նա բախվում է ջրից դուրս ցցված սուր քարերին եւ փչողի օղակը պայթում է, իսկ Մարտինը վնասվածքներ է ստանում եւ խրվում քարերի արանքը:

Նրա ընկերները զանգում են փրկարար ծառայություն: Առաջին վայրկյաններին դեպքի վայր ժամանած փրկարարները շփոթության մեջ էին: Նրանցից ոչ մեկ չէր կարող 200 կիլոգրամանոց հսկային դուրս հանել ջրից: Սակայն նրանք ելքը գտնում են: Միահամուռ ուժերով (նշենք, որ փրկարարական գործողություններին մասնակցում էր մոտ հիսուն մարդ) փրկարարները Մարտինին ջրից տեղափոխում են իրար կապված երեք նավակներից տեղում արագորեն պատրաստված լաստի վրա, իսկ հետո մոտորանավակը նրան վերցնում է բուքսիր ու հասցնում ափ: Փրկարարական աշխատանքները տեւում են համարյա տասներկու ժամ:



§²ñï³Ï³ñ· Ã»ñÃ¦ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ñ Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ· ³ÉÇù¦
éñ³ïí³Ï³Ý Ï»ÝïñáÝ êà À

îÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
ÜÇÏáÉ³Ù ¶ñÇ·áñÙ³Ý
öáËïÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
²ñ³ØáíëÇëÙ³Ý
î»ËÝÇÏ³Ï³Ý ËÙµ³·Çñ
ê³Ùí»É êÇÙáÝÙ³Ý

ÜÏ³ñÇãª Üáñ³ùñ Ø»ÉÇùÙ³Ý
Ò»ñ³íáñáÕª ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÙ³Ý

ºñ»ñ³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 567656, 24-24-22
E - mail: tert@emergency.am

Արտակարգ իրավիճակներ

îå³·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏãáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ïí»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³ùÏ³Ï³Ý` 1074,
ïå³ù³Ý³ÏÁ` 5000 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության 6.3.2008 թ.